05/14403-17
1/17. ե/12032-17

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1279

«25» 10 2017 թ. ք.Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ «ՀԱՎԱՔ» ԵՎ «ՏԱԳՆԱՊ» ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ՈՒ ԱՅԴ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ ) օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) անձնակազմին «ՀԱՎԱՔ» և «ՏԱԳՆԱՊ» ազդանշանների հայտարարման ու այդ ազդանշաններով նրանց կողմից իրականացվող գործողությունների կարգը՝ համաձայն հավելված 1-ի.

2) ՀՀ ԱԻՆ անձնակազմի հավաքի մասին տեղեկագրի ձևը՝ համաձայն հավելված 2-ի.

3) ՀՀ ԱԻՆ անձնակազմի հավաքի մասին ամփոփագրի ձևը՝ համաձայն հավելված 3-ի.

4) ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության անձնակազմի հավաքի մասին ամփոփագրի ձևը՝ համաձայն հավելված 4-ի:

2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

CoSign

Դ. ՏՈՆՈՅԱՆ